

ԲԱԿԱՆԻ

ՀԱՅԱ

ԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

II

ԱՅՈՒՂԵՐԻ ՆԵԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա. ԱՅՈՒՂԻ ԱՐՏԻՍ

Օտար թէ հայ աշուղական պատմութեան հետ բաւարար ծանօթացանք: Այժմ տեսնենք ինչ նշանակութիւն են ունեցել և ունին մեզանում աշուղները Նախ նայենք որպէս արուեստաւոր—արտիստ, գեղարվեստի տեսակէտից, որովհետեւ նա աւելի արտիստ է, յետոյ որպէս գրող և որպէս հասարակական գործիչ:

§ 14 Որպէս բանաստեղծ: Որպէս իսկական բանաստեղծ պօչտ՝ բառի եւրոպական նշանակութեամբ, ընդհանրապէս հայոց մէջ շատ չեն. իսկ միւս բանաստեղծներին աւելի ևս աշուղներին, պէտք է նայել զիջողաբարու: Այսպէս նայելով էլ կը տեսնենք, որ աշուղները, այդ անպանոյն ժիամա հանողները բանաստեղծութեան գաշտում մեծ մասամբ զինաթափ են լինում: Նրանց կոչումը և գործունէութեան տղին բոլորովին այլ լինելով գովարուեստը գեղարվեստի համար: Թէօրիան բոլորովին անծանօթ է մնացել: Ասել թէ այդ հազար տարուայ հայ աշուղական երգերի մէջ զուար ը ան ա ս տ ե զ ծ ա կ ա ն բան չը կայ, շատ խիստ կը լինի: Աշշուշանեղել են աշուղներից այնպիսիները, որոնք օժտուած են եղել պօչտական ընդունակութեամբ ու իսկապէս բանաստեղծ կոչուելու: պատիւն են վայելել, եղել են և մի քանի տաղանդաւոր բանաստեղծներ, որոնք, սակայն, մնացել են նուազ յայտնի և նուազ հետաքրքրելի: Շատերի մէջ տեսնում են զգացմունք, երևակայութիւն, մտքի թռիչք, բնութիւնը հասկանալու ընդունակութիւն, տեխնիկա, բայց թէ դարձեալ մի ինչ որ բան պակասում է. մի գունդիկ խօսքը, կոպիտ գարձուացքը փշացնում է ամեն բան:

Այս տեսակէտով ընդհանրապէս հայ աշուղներին կարելի է բաժանել ե ր ե ք կտակորիայի:

ա. Աշուղներ, որոնց գրուածքների մէջ անշուշտ բանաս-

անդութիւն կայ. անդ-անդ թոյլ, բայց անդ-անդ էլ փայլուն,
հրանտիւն:

բ. Աշուղներ, որոնք իրենց մաքերին և արուեստին աւելի
հասելով, երգի ըանաստեղծական անելու հարցին երկրոր-
դական անդ են տուել:

գ. Աշուղներ, որոնց երգերի մէջ ոչ մէկը կայ, ոչ միւսը,
ոչ հասուն և խելօք մաքեր կան, ոչ էլ հասկանում են թէ Բնչ է
բանաստեղծութիւնը. միայն վանկերին ու յանգերին զու տալով
վայրինիրոյ բաներ են զրում:

Դողման երգիներից յետոյ առաջին կարգին պատկանել
կարող են տաղասացներից մի քանի անուններ, որոնց պրուածք-
ների մէջ որբան որ նկատում է պարզութիւն՝ այնքան էլ ակնե-
րս է բանաստեղծութիւնը: Ա՞զ է յիշում—

Պիւլպիւն է հազեր ի յոտըն կօշիկ,
Զգարզն կը գինորէ սիրով անուշիկ,
Զայն է արձակեր կու կանչէ վաճրդ, վաճրդ,
Դու զուարթ, ես պիւլպիւլ դու վարդ...

Հայաստանի գեղեցիկ գարունը բանաստեղծի հոգի ունեցող
աշուղին երգել է տարիս:

Աշուն էր եղն գարուն,
Ցածաքաւ ձինն սարերուն,
Մաներու ամենն փթթան,
Հազան տերեւ զոյնզգոյն:

Բլրուն ի գարդի սիրոյն
Դիլ կերթայ զինչ մարդ մի զինոյն,
Դիշերն ի յոյս կու ձայնէ
Վազգվուաքն մինչ իրիկուն:

Աշուն էր եղն գարուն,
Զայն անուշ էրիտ հաւերուն,
Մանկութինքն ի սարեր ելան,
Նստան վեր ժագկըներուն:
Սիրամարգ հաւի նման
Հազեր են հալաւ զոյնզգոյն,
Խեա զարնեն ու խետ խազան
Ու խմեն ի յանուշ զինուն...

«Եկ Յովհաննէս Թիկուրանցին» միթէ պակաս գեղեցիկ է
նկարագրում գարունը.

Ահա եղն պայծառ գարուն,
Մազկեան այգինքն ու պաշշանին,
Դաշտ, ազգերունք գարդարեցան,

Արօտ հանին զիսիլանին.
 Դոյնքն ծաղկին ու յետ կապին,
 Անուշանայ հովն ու քամին,
 Զայներ, ձայներ յածէր այդին,
 Քաղցր կուգայ ձայն ըլրուին,
 Յորդոր գնայ ջուրն ի յառուին
 Կու թանձրանայ շուքն ի ծառին...

Բայց ահա հայ բնութեան երգերից ամենազեղեցիկը, մեր հովուերգութեան զլուխ գործոցը. հազար տարուայ հայ աշուղական երգերից ամենաբանաստեղծականը.

Լուսնեակն անուշ, հովն անուշ՝
 Շինականի քունն անուշ.
 Մագեց լուսնեակն երկնից՝
 Հովըուի փողն էր անուշ.
 Հօտաղն եղներ կարածայ՝
 Մաճկալ պառկեր՝ քունն անուշ.
 Զզզումն քամին կը փչէ,
 Մովային հովն էր անուշ.
 Հաւքեր թըռան իւրեանց բուն՝
 Բլրուի տաղն էր անուշ.
 Անմահական հոտ բուրեր՝
 Քաֆուր վարդի հոտն անուշ,

Այսպիսի տողեր կարգալին է որ ուռաները առում են Աօք-
 զիա блещետ և բետ ֆոնտանոմ. Ողջոմի անուշ հովուշ,
 Մրուանձտեանց Գարեգին եպիսկոպոս, որ զրի տուար այս զեզե-
 ցիկ ուսանաւորը. *)

Բնութիւնը և սէրը. միջնագարեան հայ աշուղը բնութեան
 հետ, նրան հաւասար սիրում է բնութեան զարդը՝ կինը. նա ան-
 համապատասխում է երր որ իւր եարը չի գալիս—

Նազլու զիլպար, զալըմ քսֆիր, թուփ աչեր,
 Ցիր չես ի գար օրիկ մի զիս հարցաներ...

Բայց ահա գալիս է նրա սիրոյ առարկան, նա ուրախու-
 թեամբ ցոյց է տալիս.

Մաիկ իմ եարին արէք, զինչ հազեր, ամենն է կանանչ,
 Հազեր գոյնզգոյն կապայ, կոճակ շարեր, օղակն է կանանչ.

*) Սողոնց կան թէ ու մողովդակամ երդ է. մխաւում են. ոյ մի հայ մզովրդական երդ առգերի մէջ ընդմէջ կամ ուսների զերչի միակերպ զերչաւ-
 րութիւն շանին, որ յառակ է միայն աշուղականին. (Խոսքը լը-լիների ամբողջ առ-
 ջերի կրկնութեան ժամին չէ):

Առեր ու պաղչան մտեր, չուր կերթայ եղերն է կանանչ,
Մտիկ ծառերում արէք ծառ ծաղկեր տերն է կանանչ:
Աշուղը մօսենում է նրան մի համբոյր գողանալու—
ԱՇ իմ նշենի ծաղկի, ծաղկեցար ու դարձար ի նուշ,
Բերանգ է աղուշ մաղուշ, պրանիներդ է արմա ու նուշ,
Զարախոդ որ ափիդ ունես, դու խոճ, տսեմ Անուշ,
Պազնեմ զայդ բերնիդ բոլորն՝ որ գինուհին հոտ գայ անուշ:
Բաւարար համարենք միշնազարենան աշուղների բանաս-
տեղծական արժէք ունեցող երգերից այս նմուշները. տաղարան-
ներում շատ կան այսպիսի գեղեցիկ կոտորներ, ով աւելի հետա-
քրքրում է, թող ինքը կարգայ, թող երգէ հանրածանօթ
և կուսնի ուստի կուզասչը, թող տեսնի նահապետ թուշակի զի-
ւանը, թող թերթէ ոչայերգը, կը տեսնի որ տաօսներորդ զա-
րէն մինչն տաօսնութերորդ զար եղած մեր աղջային երգիչներն
և տաղասացք ընդ միջաւ արտաքին ննշումն նեղուած և սեղմուած
զգացումոյ և փոխարերութեամբ արտայայտած են իրենց ըղձա-
կոթ ջութակին ձայն, երգեր են միշտ վարդ, ծաղիկ, նարգիս,
ըըլլուլ, աչք, ծով, սար, հով, հովիս, աշուն, զարուն և այլն...»
Եւ իրաւ, «Մասսեաց սարէն թշտ սայիկին, մշակներու խազն ու
քիւշտիկ, ծառն ու ծաղիկ, գարն ու տափ, կափն ու ծափ, չին
չին ու լին լին շնից ու քաղաքաց խուռն ու խորուան...» զրաւե-
ցին, յափշտակեցին մեր աշուղի սիրտը:

Անշուշտ բանաստեղծական արիւն և զգացում ունեն մեր
վիրե յիշած երեք յայտնի աշուղները՝ Սայեաթ-Նովին, Շիրինը,
Ջիւանին: Այս աշուղներից իւրաքանչիւրը իւրատեսակ առաւե-
լութիւնն ու թերութիւնն ունի: Սայեաթ-Նովին սրտում աւելի
խոշոր բանաստեղծ է, բայց արտայայտելու մէջ թոյլ. երեսում է
որ նա աւելի է զգում, քան կարողանում է իւր զգացածը երգել
կամ զրի առնել. լեզուի մէջ տկար լինելով յանգերը աղքատ են:
Ահա նրա գեղարտեստի կողմից ամենայաջող երգը—

Թամամ աշխարի պրտուս էկայ՝ չը թոյի Հարաշ, նազանի,
Չը տեսայ քու գիտարի պէս՝ դուն գիփունին բաշ, նազանի,
Թէ խամ հագնիս, թէ զառ հագնիս, կու շինիս զումաշ, նա-
զանի

Էնդու համա քու տեսնողըն ասում է՝ վաշ, վաշ, նազանի.
Դուն պատուական ջաւանիր հս, էրնէկ քու առնողին ըլի,
Օզ կու գըթնէ՝ ախ չի քաշի, վայ քու կորցընողին ըլի,
Ափսուս որ շուտով մեռիլ է, լոււը քու ծընողին ըլի:
Ապրիլ էր մէկ էր բերի քեզի պէս նազաշ, նազանի:
Դուն էն զլիսն ջունարգար իս, վըրէդ զարնըշան քաշած,

Դաստամագիդ թիլի մէշն մէ շադա մարչան է քաշած,
Ազքերդ օսկէ փիալա՝ շարինմէն փլուջան է քաշած,
Թերթերունքդ՝ նետ ու նշտար, սուր զալամթըրաշ, նազանի.

Երէսըդ՝ փարսէվար ասիմ, նըման է շամս ու դամարին,
Բարսակ միշկիդ թիրման շալըն՝ նըման է օսկէ քամարին,
Ղալամն ձեռին չէ կանգնում, մաթ շինեցիր նազըշքեարին,
Եփ նատում իս' թութի զուշ իս, եփ կանգնում իս' ուշ
նազանի:

Ես Էն Սայեաթ-Նօվասին չիմ՝ զուր ավզի վըբայ հիմնանամ,
Աշմբ միղիդ ինչ իս կամում որբաէդ մի խապար իմնանամ,
Դուն կրակ, հաքածդ կրակ, վմւր մէ կրակին դիմնանամ,
Հինգու զալամքարս վրէն ծածկիլ իս' մարմաշ, նազանի:
Այստեղ, ինչպէս տեսնում ենք, չըաշը, զումաշը, նազաշը,
Պալամթըրաշը, ռաշը, մարմաշը ոչ մէկն էլ հայերէն չէ, մրգան
նեղութիւն է քաշել աշուղը, որոնելու այս բառերը միայն առա-
ջին տողի Շաբաշնին յարմարուելու համար: Այսպիսի երևոյթնե-
րը որքան էլ որ յանակ կրկնուելիս լինեն Սայեաթ-Նօվի երգերի
մէջ չեն կարող ինարէէ, սոտուեր ձգել նրա բանաստեղծական վառ
տաղանդի վրայ, մանաւանդ երբ պատահում են մեզ այսպիսի
գոհարներ—

Բըբուզի հիդ լաց իս էլի,
Վարդի նըման բաց իս էլի,
Վարդաջըրով թաց իս էլի
Թաց իս էլի,

Չ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման,
Թիզ նման, թիզ նման
Դուն իս անման:

Բայց Շիրինը հօ բոլորովին այլ է. նա յանգերի, մաքերի
հիւսուածքի համար չի գժուտարանում. նա երգում է այնպէս ա-
զատ, ինչպէս որ խօսում է. վանկերն ու յանգերը իրենք-իրենց
են զալիս շարւում, բացի այդ նրա լեզուի մէջ թովչութիւն,
քաղցրութիւն է երևում—

Հոգի ջան, նոր բաց էլած փարդ մանուշակ ես ինձ համար,
Չեմ ուզում լոյն արեւուն, զուն արեգակ ես ինձ համար,
Անմանական ջուրերով լեցուն բաժակ ես ինձ համար,
Պատուական մարգարիտով կազմած պսակ ես ինձ համար,
Դու Զինաստանու եկած թանգազին ակ ես ինձ համար...»

Տեսմբ որքան նեշտ են զարսուած շմանուշակը, շարեգակը
շրաժակը, տպակը և այլն: Այստեղ երևում են էմպրովասէ-
ոփ մեծ ընդունակութիւն: Երևում է որ ոչ թէ առաջ յանգերն

են զանուած յետայ տաղերը, ոյլ հենց ուղղակի գրուած է առանց ձիգ ու ջանք զործ դնելու։ Շիրին զովուած աշուլ է, բայց որքան արժանի է, այնքան զի՞ն զնանատուած չէ, որքան նաև ժողովրդական անուն ունի, արժէր որ լուրջ ուշադրութիւն զարձնուէր այս խոշոր տաղմազի վրայ, ի՞նչումն է այս աշուլի պակասութիւնը։ Նա գրում է միշտ միննոյն տօնով, ինչպէս երաժշտական լեզուով տառի են՝ մօնուան, մենաձայն, միօրինակութեամբ։ Շիրինի երգերի մեծ մասը միասնակակ չափ ու կազմութիւն ունին. մինչև անդամ ուղերի, յանգերի և խօսքերի կրկնութիւններն են նկատում. Բայց և այս պակասութիւնը չի խանգարում նրա անուշ քնարի ներդաշնակութիւնը։

Նայենք մեր ժամանակակից Զիւանուն։ Առաջինների համեմատութեամբ ոպէտք է որ այստեղ աւելի խստազանչ լինինք ոյրում շատ տուաւելի համաձայն, զրագէտ հայոց լեզուի ու բառերի մեծ պաշարով, կարգացած ու լած բոլոր յայտնի աշուզներին, Զիւանին պէտք է որ բանաստեղծական ճաշակի զարգացում ունենայ, եւ չենք սիստեմ։ յայտնի աշուզը գրում է առանուն, փորձուած տեխնիզով, գեղեցիկի զգացումով, ոճի և լեզուի պարզ բայց զրաւիչ զուրեկանութեամբ։ Սայեաթ-Նովի ներքին, բանաստեղծական զգացումը, Շիրինի արտաքին էմպրովիզասիոնական ընդունակութիւնը միախանուելով Զիւանուն զարձրին անուանի վարպետ։ Նա ինքը աւելացրեց սրան և աշուզական տաղաչափական արուեստի հմտութիւնը և հասկանալով ժամանակակից պահանջն ու ճաշակը՝ երգեց արդէն մաքուր զրական լեզուով—

Նազերյա ամոց է իջել արեի պէտ վառ վառ երեսին.

Սգուլորի պէտ ուն շպարց է ծածկել պայծառ երեսին.

Աչքերի և ունքերի սեռութիւնը չէ՞ր բաւական,

Որ նորից մութ քող է ասել կոյսը կայտառ երեսին,

Կոթնարուխ բերանը փակի, աչքերը արդէն թարկացած,

Առարջը զիշերի պէտ պատել է պատկառ երեսին։

Մէկ տարի է, չեմ զիտեր, հիւանդ է, ինչ է տիրուհիս,

Կորել է, վերացել է ժպիտը խապառ երեսին։

Մարտը զարուն զիտանալով զզոյց չը պահեց ինքն իրան,

Գոյնը որ թօթափել է ցուրտն է պատճառ երեսին։

Տապալեց յոյսէ զդապարիկի նման, Զիւանի,

Հարտէց յանկարծ փէց անսելի թաթառ երեսին։

Ի՞նչ է այս աշուզի պակասութիւնը։ Ինչպէս այժմեան վարպետ նկարիչը՝ վստահ իւր կարողութեան վերայ՝ խայտարդէտ գոյներով նորանոր խաղեր է անում ու նկարում այնպէս, որ

վրձինի ամեն մի ազատ շարժումը երևում է կտակի վրայ, այնուհետ էլ Զիւանին՝ երևի վստահ իւր արուեստի, հայոց լեզուի, յանգերի հարուստ պաշարի վերայ ու այլ ես վախ չունենալով այդ ամենի նշանակութիւնից, վերջերս գրում է շատ կմախքացած, շարլոն ու մերկ լինելու չափ պարզ՝ որ ներկայումս ասում է և լա դէճանց. մարդ կայ սիրում է գեղատենաթզմը, մարդ կայ տեսնել ու լսել չի ուզում այդ պատակի արդիւնքները, Անամեր աշուղի այդպիսի երգերից մի նմուշ:

Երեք ձայն կայ շնու է սիրում ականջու,

Ուսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն.

Այդ երեքն են մշտական իմ պահանջու՝

Ուսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Չուրը կեանք է, ուսկին օգրաւոր յազթող,

Սիրունից կը լսեն կենաստու ներբող,

Արզեօք մարդ կայ այդ երեքը չը սիրող,

Ուսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն,

Գրպանդ ունենաս ոսկով լի քսակ,

Մօտ մի չքնազ կոյս, զիմացդ գետակ,

Երեքին էլ լսես զիշեր ժամանակ,

Ուսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Սիրունի ձայնը, ջրի ձայնը, ինարիկէ, բանաստեղծական բաներ են՝ բայց ամբողջութեան մէջ բանաստեղծութիւն չը կայ: Զը կայ գրասիա—նազելիութիւն, երաժշտականութիւն, թռվշութիւն, զգացմունք, վեհութիւն, ինչպէս ՞օրինակ առաջին երգի, իսկ ըսկիի ձայնը հօ փշացնում է ամեն մի բանաստեղծութիւն, աւելի ևս աշուղի՝ որ պէտք է ուր անմեղ հոգին ոսկով չը ծախի նա Մամնային...։

Խոսկով մեր նոր ժամանակի երեք նշանաւոր աշուղների մասին ու գատելով նրանց առաջին կատեգօրիային, արդէն հասկանալի դարձրինք, թէ բացի սրանցից ովքներ կարող են այս կարգին պատկանել: Աշուղների մէջ մի երգ աւելի բանաստեղծական է, երբ նրա մէջ քիչ է, կամ պակասում է քարտոցն ու վարդապետութիւնը: իսկ երբ մի գէաք է նկարազբռում, կամ բնութիւնն է երգում, պարզ է որ արգէն ինքնըստինքեան բանաստեղծական է գատնում: «Երկնէր երկնից» սկսած, միջնադարեան տաղերից ու ոտանաւորներից բաւական թուռվ (լեզուի ինզիբեր անտես առնելով): ու նոր աշուղներից քանի մի անուններ, ինչպէս Թուրինչ, Միսկին Բուրջի, Թիմիա, Թիշիկնովայ, Ագամ Նազառվ, Նիտայի, կարող են պատկանել նոյնպէս այս կարգին:

Միջին կարգին պատկանող աշուղներն ամենքից շատ են.

որովհետեւ աշուղը աւելի քարոզիչ է քան բանաստեղծ։ Տաղերից բաւական թուով, մինչև նոր և նորագոյն աշուղների մեծապայն մասը (աեղ-տեղ 'ի բաց չառած և վերոյիշեալ աշուղները) պէտք է կարգութիւն այս կարգը։

Երրորդ կարգին պատկանողներն աւելի նորելուկներն են, մէկ էլ այն աշուղները, որոնք անշնորհը լինելուց ջոկ, թոյլ են վերաբերում գործին։ ոչ աշուղական արուեստը զիտեն, ոչ էլ ընդունակ են իրենց միտքը արտայայտելու։ Կարգում ես մի ամրող երգ, չը գիտես ինչ է ուղում ասել, ոչինչ չես հասկանում։ Աշըդութեան այդ անկումը ասած է զայխս նրանից, որ այժմեան սկզնակ ու ինքնակոչ աշուղները գործին շատ վայր ի վերոյ են նայում, մի քանի բասեր ու յանզեր սրանից-նրանից վերցնելով մի երգ են շնուռմ, կարծելով թէ ահա զարձան աշրդ Եփրինը։ Աշըդութիւնները մի ընդունակութիւն չունենալու հետ, չունեն և համեստութիւն ու համբերութիւն աշակերտելու, սովորելու, փորձուելու, չանցին սէր և եռանգ։ Ասենք դա մեզանում այժմ ընդհանուր ցաւ է։ Նոյնպիսի երեսյթը նկատում է մեր կեանքում ամեն տեղ։

§ 15 Որպէս երաժիշտ։ Ի՞նչ դրութեան մէջ է երաժշտական արուեստը՝ մուզիքը աշուղների մէջ։ Որոնել այդ պարզ, հասարակ մարդկանց մէջ մի կրթուած, կատարելագործուած նուազող, մի երեխի մասնագէտ—վիրառուօք—անմիտ բան կը լինէր, ինարկէ։ Երաժշտութեան արրական թէորիան (եւրոպական մշտաբով) չէ իմացել՝ և չի իմանում նրանցից ոչ ոք։ Չենք ճանաչում մի աշուղ՝ որ գոնէ քիչ ծանօթ լինի հայկական՝ էլ չէնք ստում եւրոպական ձախնագորութեանը։ Մի օտար մարդ նախ չէր հաւատաւ, յետոյ կը զարմանար. Ի՞նչպէս կարելի է մուզիքանս լինել տառանց նոտերի, այդ միննոյն է թէ զրագէտ կոչուել առանց առները ճանաչելու։ Եւ այդպէս էլ է. չը որ աշուղներից շատերը՝ հեղինակն շնորհալի բանաստեղծ են եղել առանց զիր ճանաչելու ի՞նչ է ուրիշն աշուղին երաժիշտ զարձնողը—այն, ինչ որ նախապատմական մարդուն էին զարձնում։ (աշուղը նմուշ է նախապատմական կեանքի). այդ զ ա ց մուն ք ը, լ ո ո դ ո ւ թ ի ւն ը և յ ի շ ո զ ու թ իւ ն են, Երաժշտական լսողութիւնն ու յիշողութիւն վերին աստիճանի զարգացած է լինում աշուղների՝ մանաւանդ կոյր աշուղների մէջ. իսկ զգացմունքը, մուզիքի այդ հոգին, ըզգացորդականութիւնը, ծով է, անծայր ու անյատակ ծով այդ մարդկանց պարզ և մաքուր սրտում։

Ի՞նչ են արել միր աշուղները որպէս երաժիշտ։ Գողթան